

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐՈՒ ՑԱՆԿ 1996 ՏԱՐԻՈՅ

- 1- Տիար Յակոբ Անդրէասեան կը նուիրէ հոգելոյս Դաւիթ Ժ. Վրդ. Տէրտէրեանի (Լուսարարապետ Ս. Աթոռոյ) Լանջախաչը, պատրաստուած 1902 թուին, զոր յանձնեցինք Գասձատան 12 Յունուար 1996-ին: Նաեւ 2եռաց խաչ մը եւ Մաշտոց մը, հանգուցեալ հօր կողմէ գործածուած:
- 2- Հոգ. Տ. Ժիրայր Ժ. Վրդ. Թաշմեան, Ս. Յակոբայ Տաճարին կը նուիրէ՝ Կարմիր շուրջառ մը զոյգ արծիւ մօթիմներով, Փորուրար, զոյգ քազան, գօտի(պարզ) պատարագի շապիկ, երկու զոյգ հողաթափ, սկիհի կարմիր ծածկոց մը եւ հինգ զոյգ գուլպաներ:
- 3- Հոգ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան՝ Ս. Յակոբայ Մայր Տաճարին կը նուիրէ Մէկ Չայնքաղ Շարական, Մէկ Ատենի Ժամագիրք եւ մէկ փայտէ աթոռակ:
- 4- Տիրամայր Մարի Բէշիշեան Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ հետեւեալները: - Մէկ զոյգ վարագոյր տաճարի Աջակողմեան եւ Չախակողմեան սիւներու Ս. Աստուածածնայ պատկերներու համար: Մէկ վարագոյր Տէրունական քարի պատկերի Որդւոց Որոտմանի համար: Մէկ կարմիր-ասեղնագործ տանթելայով գորփուրայ Ս. Գլխաղրի եւ Մէկ խոշոր կորփուրայ Աւագ-Սեղանի: Աւագ խորանի կարմիր Աթլասէ եւ ասեղնագործ կորփուրայ (տանթելայ), Մէկ Աւետարանի քոնիչ, Մէկ Կենաց Փայտի կարմիր "Թիւլ"(Զօղ) ծածկոց:
- 5- Սանտրունի եղբայրներէ՝ երկու զոյգ ծաղկամաններ Ս. Յակոբայ եւ Ս. Թորոսի մատրան:
- 6 - Ամեն. Ս. Պատրիարք Հօր ձեռամբ, Յունաստանէն բերուած զոյգ մը լապտեր(ֆանուս) Ս. Յակոբեանց Տաճարին թաղումներու գործածուելու առթիւ:
- 7- Ամերիկայէն Պր. Կարօ Գուրեան Ս. Յակոբին կը նուիրէ 60 հատ փոքր սեղանի մօմ:
- 8- Մարսիլեայէն Նորիկեան ընտանիք Ս. Յակոբեանց Տաճարին կը նուիրեն վարագոյրի կտոր մը:
- 9- Գանատայէն Տիկին Էլիզա Սալիպեան Ս. Գլխաղրին կը նուիրէ սկիհի ծածկոց մը ազնիւ մետաքսի վրայ, փուլագարդ եւ խաչագարդ, նաեւ խաչի քոնիչ մը նոյն կտորէն: Թօրօնթօ 14 Ապրիլ 1996-Գանատա-
- 10-Ս. Հրեշտակապետաց եկեղեցին, Ս. Աստուածածնայ Տեսչութենէն ստացած է՝ Երկու նեղ գունաւոր ծածկոց եզերքը տանթելներով: Մէկ Դամսկեայ ժամարարի անձեռոց եւ երկու ուրար բաց կարմիր:
- 11-Տիկ. Յասմիկ Բանիկեան եւ դստերք Ս. Գլխաղրի մատրան կը նուիրեն մէկ կարմիր թաւիշէ ծածկոց ձեռագործ մը, իրենց ամուսնոյն եւ հօր Գէորգ Բանիկեանի յիշատակին (19.05.1996):
- 12-Տէր եւ Տիկ. Շանթ Գասպարեան երկու թիթեղ ձիթաիւղ Ս. Յակոբայ:
- 13-Տիար Հրայր Կարապետեան 65 Սեղանի փոքր մերմակ մօմ Ս. Յակոբայ
- 14- Ամերիկայէն Տիկ. Քնարիկ Յովսէփեան Ս. Յակոբեանց Տաճարին կը նուիրէ Յայսմաւուրքի ծածկոց մը կանանչ թաւիշի վրայ աշխատուած:
- 15-Ամասաքնակ Օր. Քնար Զորգմեան Ս. Յակոբայ Ս. Աստուածածնի "Գեղեցիկ" պատկերին կը նուիրէ մէկ ոսկի փոքր խաչ(կլորածեւ մանր քարերով եւ շղթայով):
- 16-Հոգ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան Ս. Յակոբի կը նուիրէ զոյգ մը պատարագի հողաթափ (սեւ թաւիշէ եւ ուլունքէ):

- 2 -

- 17 - Ամերիկայէն Տիկ. Աննա Ամպարժեան Ս. Յակոբին կը նուիրէ երկու ծածկոց:
- 18- Կ.Պոլսէն մի ոմն երեք կլոր փոքր "Քրոշէ" ծածկոցներ կը նուիրէ Ս. Յակոբին:
- 19- Տիկ. Լուսին Փանոսեան Ս. Աստուածածնայ նկարին կախուելու համար կը նուիրէ ոսկեայ խաչ մը:
- 20- Տիկ. Յասմիկ Բանիկեան եւ աղջիկները Ս. Աստուածածնայ Տաճարի, Հեթում Թագաւորի սեղանին կը նուիրեն ծածկոց մը կարմիր Թաւիշի վրայ ձեռագործ եւ փուլազարդ (25.08.1996):
- 21 - Հայֆայաքնակ Օր. Շաքէ Պէտրոյեան Ս. Յակոբայ Տաճարի Ս. Աստուածածնայ պատկերին առջեւ կախուելու համար կը նուիրէ ոսկեայ ապարանջայ մը:
- 22 - Տիկին Արուսիակ Զաթալեանի ձեռամբ կտտարուած երեք շապիկներու հիմնական նորոգութիւն (ծաղկազարդի Դանթաքցի գործածուելու Ս. Յակոբայ Տաճարին):
- 23 - Տիկ. Ալիս Քահրէմեանէ Ս. Գլխադրի կը նուիրէ մերմակ սեղանի ծածկոց մը:
- 24 - Օր. Սեդա Կարապետեան Ս. Յակոբայ Տաճարին կը նուիրէ Յայսմաւուրքի ծածկոց մը, մուծ կանաչ մետաքսի վրայ ձեռագործ, իր հօր Գէորգ Կարապետեանի յիշատակին:
- 25 - Ամանէն Տիկ. Արշալոյս Տարագժեան Ս. Յակոբայ եկեղեցւոյն կը նուիրէ Աւետարանի բռնիչ մը:
- 26- Տիար Լեւոն Օհաննէսեան թիթեղ մը ձէթ կը նուիրէ Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցիին:
- 27- Տիկին Սաթենիկ Յակոբեան Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցւոյն կը նուիրէ Գրակալի կարմիր ծածկոց մը, քրօշէի մերմակ փողոցով, ի յիշատակ իր ծնողաց:
- 28- Սանտրունի եղբայրներ, Ս. Յակոբայ Տաճարին կը նուիրեն մեծ յախճապակիէ գունդ մը:
- 29 - Գերաշնորհ Տ. Յուսիկ Եպս. Պաղտատեան Ս. Աստուածածնայ Տաճարին կը նուիրէ լրիւ վարդապետական զգեստ:

Դաւիթ Արքեպս. Սահակեան

ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ Ս. ԱԹՈՌՈՅ